



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3677



1913

2010

EB 2002

ԼԻՐՍԱՐԵՐ


(45)

Գրաւոր Վարժութիւններ

Բ. ՏԱՐԻ

1913 թ.

491.99-8  
L-61



Կ-4. մ 29

491. 99-8

Լ-61

Տ

# ԼՈՒՍԱԲԵՐ


ԳՐԱԿԱՆՈՒՐ

Բ. ՏԱՐԻ

Դատելու ու շարադրելու, լեզուական ձեւերու ու բառագիրութեան  
աւղագրական ու հերականական գրաւոր կենդանի վարժութիւններ:

Կազմեցին

ՍՏԵՓԱՆ ՂԻՄԻՑԵԱՆ 



## 1. ԳԵՐ ԳՐԵԼ ԿՅ ԽԱՂԱՅ

Ո՞վ է նստեր աղբարիկի գրասեղամին վրայ:  
Նստեր է ի՞նչ կ'ընէ:  
Անոր քաշած ծուռ ու մուռ զծերը կարդալ կարելի՞ է:  
Անիկա դեռ ի՞նչ լնել չը գիտէ:

## 2. ԵՍ ԳՐԵԼ ԳԻՏԵՄ

Խսկ քու գրածդ կարդալ կարելի՞ է. ինչնու:  
Այս վարժութիւնները հիմա ինչնու կը գրես:  
Ինչքան ժամանակ է արդէն, որ գրել կը սորվիս:  
Որ մեծնաս ի՞նչ պիտի գրես:

## 3. ԽՕՍԻԼ ՈՒ ԳՐԵԼ

Մօսիկ եղողներուն մեր միտքը ինչպէս կը յայտնենք:  
Ուրիշ տեղ եղողներուն մեր միտքը յայտնելու համար  
ի՞նչ կ'ընենք:  
Ուրեմն խօսքը՝ խօսիլը ինչնու համար է:  
Խսկ գիրը՝ գրելը ինչու համար է:

#### 4. ՅԱԿՈԲԻ ՄՏՍՏՈՒՔԸ

— Ի՞նչ կը մտմտաս, Յակոբ. — հարցուց ընկերը:  
 — Ե՛, մտածելիք շատ : Ամենէն առաջին մտածմունքս՝  
 հայրս հիւանդ է, երկրորդ՝ մայրիկիս գործը դժուարացաւ :  
 Այնպէս որ կը խորհիմ՝ պէտք է տունը մնամ իրեն օգնելու :  
 Միւս կողմէն ալ կը մտածեմ՝ բայց դասերէս ետ պիտի մնամ :

#### 5. ՅԱԿՈԲԻ ԳԼԽՈՒՆ ՄԷՋ ԵՂԱԾ ՄՑՔԵՐԸ

Դրէ Յակոբին ցաւ պատճառող առաջին միտքը. բովը դիր անոր երկրորդ մտածմունքը. բովը դի՛ր անոր երրորդ մտածմունքը. եւ վերջապէս զրէ անոր զլիսէն անցած չորրորդ միտքը :

#### 6.

Դուն ի՞նչ խորհուրդ կու տաս Յակոբին. ի՞նչպէս ընէ, որ  
 թէ դպրոցէն չը զրկուի և թէ մայրիկին օգնել կարողանայ:

#### 7. ԱՐՏՈՒ

Լոյսը բացուեցաւ: (ինչե՞րը) արթնցան իրենց բոյներուն մէջ: (Երջը) վեր բարձրացաւ աներուն ծխաննելէն: Հեռուն (ինչե՞րը) դեռ թաղուած են մշուշի մէջ: Հիմա, հիմա (ինչը) պիտի ծագի:

#### 8.

Ի՞նչին իմացար, որ թռչուններն են արթնցողը:  
 Ի՞նչ էր պատճառը, որ մուխ կը բարձրանար ծխաններէն:  
 Մշուշին ուրիշ ի՞նչ կ'ըսենք:

#### 9. «ԱՐՏՈՒ» ՅՈԴՈՒԱԾԻՆ ՄԷՋ

Ի՞նչ է ըսուած թռչուններու մասին:  
 Ի՞նչ է ըսուած լոյսի մասին:  
 Ի՞նչ միտք է յայտնուած մուխի մասին:  
 Ի՞նչ միտք է յայտնուած արկի մասին:  
 Ի՞նչ է ըսուած հեռուն եղած բաներուն մասին:  
 Բոլորը միասին քանի՞ միտք է յայտնուած առտուան մասին:



#### 10. ԴԵՊԻ ՊԱՊՈՆՑ ԳԻՒՂԵԸ

Քոյր ու աղբարիկ կ'երթան ձեռք-ձեռքի: Կ'երթան պապոնց տեսութեան: Ճամբան երկար է քիչ մը. արեւն ալ կ'այրէ. բայց վնաս չունի, հիմա կը հասնին:


Այնպէս լաւ խաղալիքներ շինել գիտէ մօրեղբայր Աւօն. իսկ մամիկի մառանէն համեղ միրգերը անպակաս են միշտ:

#### 11.

Դրէ ինչ որ ըսուած է մօրեղբայր Աւօի մասին:  
 Դրէ ինչ միտք որ յայտնուած է մամիկի մառանի համար:  
 Քոյր ու աղբարիկը ի՞նչպէս կ'երթային:  
 Անոնք հւը կ'երթային:  
 Արեւի համար ի՞նչ է ըսուած:  
 Ճամբոն մասին ինչ միտք է յայտնուած:

#### 12. Ի՞ՆՉ ԿԸ ԿԱՐԾԵՍ

Հոն իրենց ժամանակը անոնք ուրամի անցուցին, թէ տխուր:  
 Մօրեղբայր Աւօն փոքրիկի համար ի՞նչ խաղալիք շինեց:  
 Պառաւը ի՞նչ միրգ տուաւ իր թռոնիկներուն:  
 Թռոնիկները երբ վերադան տուն:  
 Համրէ հիմա զուն՝ քանի՞ միտք յայտնեցիր անոնց մասին:



### 13. Հօրը ԱԶ ԹԵՒԸ

Երուանդի հայրը ի՞նչ գործ ունի:  
Իրիկունը տղան դպրոցէն մուր կ'ըշտապէ. ինչու:  
Ի՞նչ մը կը կապէ վրան, ինչի՞ն ետեւը կ'անցնի, որուն  
փոխարէն:

Ալ անկէ ետքը նվ է, որ կը բերէ յաճախորդներուն ու-  
զած ապրանքը, նվ է, որ կը կուէ ու կը չափէ:  
Կշռելէն ետքը ապրանքը ի՞նչ կ'ընէ:  
Հաշիւներն ալ ինքը կը տեսնէ, դրամը ով կը գանձէ:  
Ամենքը Երուանդի համար հօրը ի՞նչն է կ'ըսեն:

### 14. ՊԱՏՄԵՌ ՈՒ ԳՐԷ

Դում ալ կ'օգմե՞ս ըու ծնողմերուտ, հօ՞րդ, թէ՞ մօրդ. տո՞ւմը, դո՞ւմը, ե՞րբ,  
յամա՞լ. պատմէՌ ի՞նչ որ կ'ըմես և ի՞մչպէս որ կ'ըմես:

### 15. ԻՐԻԿՈՒՆ

Մութը (ի՞նչ եղաւ): Տներուն մէջ (ի՞նչը ըլ) վառեցին: Ամեն  
մարդ օրուան աշխատանքը (ի՞նչ ըրաւ): Տուն կ'ըշտապէ (ի՞նչ  
ընելու):

### 16.

Ո՞րն է առաջին միտքը այս նոր գրածիդ մէջ: Քանի՞ բա-  
ռով է ըսուած այդ միտքը:

Ո՞րն է երկրորդ միտքը: Այդ երկրորդի միտքը քանի՞ բա-  
ռով է ըսուած:

Ո՞րն է երրորդ միտքը: Երրորդ միտքը քանի՞ բառով է  
արտայայտուած:

Ո՞րն է չորրորդ միտքը: Չորրորդ միտքը քանի՞ բառով է  
արտայայտուած:

### 17. ՆԱԽԱԴԱՍՈՒՅԻՒՆ

Բառերով արտայայտուած ամեն մէկ միտք  
կ'ըսուի նախադասութիւն:

Այնպէս որ կտորի մը մէջ քանի միտք, քանի մտածմունք  
որ կայ, միեւնոյն է ըսենք՝ քանի նախադասութիւն կայ:

### 18. ՅՈԳՆԱԾ ԱՐԵՒԸ

Շատ է յոգներ աշնան արեւը: Արտերուն մէջ հասցուց  
(ի՞նչ ու ի՞նչը): Այդիներուն մէջ հասունցուց (ի՞նչ ու ի՞նչը): Սարերուն ու դաշտերուն վրայ աճեցուց (ի՞նչ ու ի՞նչը): Ամեն  
տեղ (ի՞նչ) սփռեց. (ուրիշ ի՞նչ) տուաւ ամենուն երկար-երկար  
օրերով:


Հիմա տժգուներ է. ուշ կ'ելնէ իր անկողնէն ու շուտ  
կ'երթայ պառկելու: Շատ է յոգներ (ո՞վ):

### 19.

(Ա՛ռ մատիտդ ու տետրակիդ վրայ փոքրիկ կեցած զծիկներով զատէ  
իրարմէ վերի պատմութեան նախադասուրիւնները:)

ՀամրէՌ քանի՞ նախադասութիւն եղաւ ընդամենը :

ԳրէՌ ի՞նչ ըսել է նախադասութիւն :



## 20. Պարսն ԿԸ ՑԱՏԿԵՆ

Դադարի զանգը տալուն պէս՝ ի՞նչ ըրին բոլոր աշակերտներն ու աշակերտուհիները։

Զավէլը իր երկու ընկերներուն հետ ինչո՞ւ քաշուեցաւ պարտէզին մէկ անկիւնը։

Որո՞նք են բոներ պարանին երկու ծայրերէն ու ի՞նչ կլնեն։

Իսկ Զավէլը։ Մն ի՞նչ բանի համար հոգի կու տայ։

## 21. ԴԱՍ, ԴԱՍԱՐԱՆ, ԴԱՍԱՏՈՒ

Դադարի զանգը տալուն պէս՝ աշակերտները նորտեղէն դուրս թափեցան։

Ինչո՞ւ համար այդ սենեակին դասարան կ'ըսենք։  
Դասարան ու դասատու բառերը նր բառէն են շինուած։

## 22.

Նախադասութիւն մը զրէ, ուր դաս ու դասարան բառերը գործածուած ըլլան։

Նախադասութիւն մը զրէ, ուր դաս ու դասատու բառերը գործածուած ըլլան։

## 23. ՊԱՏՄՈՒ ՈՒ ԳՐԵ

Նըր մտար դպրոց, ո՞վ բերաւ քեզի, իմչպէս, որո՞ւմ յանձնեց. ո՞ւր նստեցար, ի՞նչ տեսար, ի՞նչը սիրեցիր, իմչը ո՞չ. ո՞ր եղաւ առաջի՞ն դասդ. ի՞նչ կը մտածէիր. իրիկունը իմչպէս դարձար տուն, ի՞նչ կ'ըզգայիր։

Իսկ վերնագիրը դի՛ք «Դպրոց մտմելս»։

## 24. ՔՐՏՆԱԾ ԱՏԵՆԴ ԶԱՒՐ ՄԻ ԽՄԵՐ

Ռուբէնը ի՞նչ էր ըրեր, որ այդպէս քրտներ էր։ Իսկ հայրիկը ի՞նչ էր պատուիրեր Ռուբէնին։ Ռուբէնը ի՞նչո՞ւ ականջ չը զրաւ հօրը պատուէրին։ Ի՞նչ ըրաւ ու հետեւանը ի՞նչ եղաւ։

Հիմա ի՞նչ վիճակի մէջ է. որո՞նք են իր հիւանդութեան նշանները։ Բժիշկը ի՞նչ պատուիրեց ու ի՞նչ տուաւ։

Ո՞վ է շատ տխուր ու վշտացած։

## 25. ԼԻՒԱՆԴ ՈՒ ԴԵՆ

Ի՞նչ կ'ըսենք այն թղթի կտորին, որուն վրայ բժիշկը շինուելիք գեղերը կը գրէ։

Դեղերը նուր կը պատրաստեն և ո՞վ կը պատրաստէ։

Դեղագործ, գեղագիր ու գեղարան բառերը նոր բառէն են շինուած։

Հիւանդանալ, հիւանդութիւն և հիւանդանոց բառերը նր բառէն են շինուած։

## 26. ԾԱՌԵՐ

Ի՞նչ ծառեր կան ձեր կամ ձեր քովի պարտէզին մէջ։  
Ի՞նչ լսել է ընկուզենի։ Ի՞նչ ըսել է թղենի, նոնենի։  
Տանձի ծառին ի՞նչ կ'ըսենք, իսկ խոճորի ծառին։  
Նախադասութիւն մը զրէ, ուր գործածուած ըլլան կեռաս ու կեռասենի բառերը։

Թթենի բառը նր բառէն է կազմուած։

Սալոր բառէն ի՞նչ բառ կընաս շիներ, որ սալորի ծառ նշանակէ։

Պտուղ ցոյց տուող բառերուն վրայ ի՞նչ պիտի աւելցնենք, որ անոր ծառը ստանանք։



## 27. ՆԿԱՐԻՑՅ

Յովիսանը մը զբաղմունքը  
շատ կը սիրէ : Ո՞ւր և երբ  
կ'ըզբազուի անով : ինչով ու  
ինչի վրայ կը նկարէ : Ի՞նչ  
բաներ կը նկարէ :

**28. ԿՈՒԶԻԿ**, ԿԱՐՀԱՏԵՍ ՈՒ ՎԱՏ ՇԽՉՈՂ ՏԱՆ

Կը հաւնիս վերի տղուն նստուածքը :  
Գրելու ու նկարելու ատեն ինչպէս պիտի նստիս : (Մէջ-  
քը ինչպէս պիտի ըլլայ, կուրծքդ ինչպէս . ինչպէս պիտի  
պահես զլուխդ ու ոտքերդ :)

Շարունակ ծուռ նստող ու զլուխը կախ աշխատող տղան  
վերջը ի՞նչ կը դառնայ :

## 29. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԷ

Դում ո՞ր զբարմութը աւելի՝ կը սիրես. ո՞ւր և երբ կ'ըզբազովս ամով. ի՞նչ  
պիտոյքներու պէտք ութիս աշխատանքիդ համար. ի՞նչու համար այդ աշխատանքը  
աւելի կը սիրես: Վերթագիրը դիր «Իմ սիրած աշխատանք»:

## 30.

Ո՞րն է նկարել, նկարիչ, նկարչութիւն բառերուն  
արմատը եղող բառը :

Ո՞րն է երգիչ, երգարան, երգել բառերուն արմատը :

Ո՞րն է տեսութիւն, տեսաւ, տեսակ բառերուն  
արմատը :

## 31. ԲԱՌԵՐ ՈՒ ԻՐԵՆՑ ԱՐՄԱՏԸ

Արտագրէ յաջորդ բառերը ու դիմք դեմք իրենց արմատը:  
Հազար—..., քաջութիւն—..., վնասակար—..., հասակա-  
լոր—..., նեղութիւն—..., ամանեղին—..., ուժեղ—...,  
համով—..., ծեծկըուք—..., որդնած—..., մատնոց—...:




## 32. ՄՈՒՌ ԳԲՄԵԹՈՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Յովիսանը անգամ մը ի՞նչ նկարեց : Ա-  
ռաջ մը մասը, ե՞տքը ինչը, վերջը ինչը :  
Նկարածը  
որո՞ւն տա-  
րաւ ցոյց տա-  
լու :

Անիկա ի՞նչ  
պակասութիւն գտաւ Յովիսանի  
նկարին վրայ :

Այդ պակասութիւնը ու-  
նեցող շէնքերը ի՞նչ կ'ըլլան  
շուտով :

Այդ փորձանքէն իր եկե-  
ղեցին աղատելու համար Յովի-  
նանը իր նկարին վրայ ի՞նչ ա-  
ւելցուց, ինչպէս :



## 33. ԱԼՕԹՔԻ ՏՈՒՆԸ

Վերջին անգամ երբ էիր գացեր եկեղեցի. որո՞ւ հետ էիր.  
մւր էիր կեցեր. բազմութիւն կամ եկեղեցին :

Ճակատը սեղանին վրայ որո՞ւ պատկերն էր դրուած. սե-  
դանը ի՞նչ բաներով էր զարդարուած :

Քահանան ի՞նչ կ'ընէր վերը բեմին վրայ . իսկ դպիրները  
ի՞նչ կ'ընէին վարը դասէն :

Վերջանալու ժամանակ ի՞նչ բաժնեցին բոլոր ժողովուր-  
դին :

34. ՀԱՅ ՈՒ ՀԱՅԵՐԻՆ

Դուն ո՞ր ժողովուրդին կը պատկանիս, որ ազգին :  
Ո՞րն է մեր ազգի լեզուն :  
Դուն ո՞ր լեզուով կը խօսիս . հիմա ո՞ր լեզուով է, որ կը  
զբես ու կը կարդաս :  
Ինչո՞ւ կը սիրես այդ լեզուն :

35. ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Չեր գիւղը կամ քաղաքը ուրիշ ի՞նչ ժողովուրդներ կ'ապ-  
րին հայերու հետ միասին :  
Թուրքերէնը ո՞ր ժողովուրդի լեզուն է :  
Ի՞նչ կ'ըսենք քիւրտ ժողովուրդի լեզուին :  
Ի՞նչ կ'ըսենք ոռւս ժողովուրդի լեզուին :  
Չեր դպրոցին մէջ հայերենէ զատ ուրիշ ի՞նչ լեզու կը  
սորվեցնեն :

36. ԵՐԵՆ

Հայերէն, թուրքերէն, քիւրտերէն բառերուն մէջ  
որո՞նք են արմատները :

Այդ արմատներուն վրայ ի՞նչ ենք աւելցուցեր, որ ազգ  
ցոյց տուող բառը դարձեր է լեզու ցոյց տուող :

Արմատին վրայ աւելցած այդ մասը, եթէ առանձին  
առնենք, ինքը բան մը կը նշանակէ, բան մը ըսել է :

37.


(Արտագրէ, ու պզտիկ գծիկով մը իրարմէ բաժնե բառի արմատը ու  
արմատ չեղող մասը . օրինակ՝ գիւղ-ական, շաբար-եղին :)

Հայերէն, գիւղացի, հաւնոց, ճերմակեղին, պակասու-  
թիւն, ծեծել, փախկոտ, ճաշարան, ծակեցի, գիրք, ուժեղ,  
մարդիկ, գետեր :

38. ԱՐՄԱՏ ՈՒ ՄԱՍՆԻԿ

Բառի այն մասը, որ առանձին առած նշանակութիւն մը  
ունի, կ'ըսուի արմատ. բառի այն մասը, որ առանձին առած  
նշանակութիւն մը չունի, կ'ըսուի մասնիկ

Մասնիկները առանձին առած նշանակութիւն չունին,  
բայց արմատներուն վրայ աւելնալով նոր բառեր կը շննեն:



39. ՊԶՏԻԿ ԶԿՆՈՐՍԸ

Ո՞ւր կը բնակէր Սարգիսի մօրաքոյրը :  
Սարգիսը երբ և ինչքան ժամանակով հիւր էր եկեր մօ-  
րաքոյջ տունը. որո՞ւ հետ :

Ո՞վ ընծայեց անոր սուր-սուր կարթեր ու կարթի երկար  
թել մը :

Սարգիսը ամբողջ օրով ո՞ւր կ'երթայ կը նստի, ինչերո՞ւն  
վրայ, ինչի՞ն մօտիկ ու ի՞նչ կ'ընէ. ինչպէս :

Բան մը բոնելու կը յաշողի. բոնածը ի՞նչ կ'ընէ :

40. ԶՈՒՐ

Ծաղիկներուն ջուր տալուն մէկ բառով ի՞նչ կ'ըսենք :  
Երբ պտուղներուն մէջ շատ ջուր կայ՝ մէկ բառով ի՞նչ-  
պէս կ'ըսենք :

Ջուրի մէջ աճող բոյսերուն մէկ բառով ի՞նչ տեսակ բոյս  
կ'ըսենք :

Ջրել, ջրոտ, ջրային բառերուն մէջ ո՞րն է արմատը :  
Որո՞նք են ջուր արմատին աւելցած մասնիկները :

Արմատին մէջէն ո՞ր հնչիւնը կորաւ, երբ վրան զանազան  
մասնիկներ աւելցուցինք :

## 41.

Արտագրել հետեւեալ բառերը ու քովը դի՛ր իրենց արմատները.

**Սակել**—..., փնջել—..., սրել—..., ծռած—..., մրոտ—..., հրեղէն—..., շնիկ—..., զլխանոց... , բրդոտ—... դռներ—..., մկան—..., գնդակ—..., թթենի—..., ծխան—...:

## 42. Թ Ի ՈՒ ԱՌԱԳԱՍՏ

(Նայէ նախորդ երեսին պատկերը)

**Ծովուն ափը տղուն մօտիկ ի՞նչ մըն է կեցած :**  
իսկ հեռուն ծովուն բացերը երկցողը ի՞նչ տեսակ նաւ է:  
ինչո՞ւ համար է առազաստը:  
Նաւակը ինչո՞վ առաջ կը վարենք:  
ի՞նչ ըսել է թիավարել

## 43. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԷ

Իսկ դուն մէկ- երկու շաբաթով տեղ մը հիսր եղե՞ր ես, ե՞րբ, ո՞ւր, որո՞ւ հետ: Ի՞նչ տեսակ տեղ կը գտնուէր այդ տունը, մօտերը ի՞նչ բաներ կայիթ: Ժամանակ ի՞նչպէս կանցնէլը, լի՞ն կը խաղայիր, միթա՞կ: Հիմա կը յիշե՞ս այդ բոլորը, կարօտե՞ր ես. և մասնաւորապէս ի՞նչը կամ ո՞վ:— Իմքդ ալ մտածէ յարմար վերեազիր մը:

## 44. Գ Ի Ր ՈՒ Գ Ր Ի Զ

**Այս բոլոր շարադրութիւններն ու վարժութիւնները ինչի վրայ կը գրես, ինչո՞վ կը գրես:**  
Գրելով պարտրաստուելիք դասին ի՞նչ տեսակ դաս կ'ըսենք:  
Վրան գիր գրելու համար շինուած սեղանին ի՞նչ կ'ըսենք:  
**Գրել, գրիչ, գրաւոր բառերուն արմատը ո՞րն է:**  
Որո՞նք են այդ արմատին վրայ աւելցած մասնիկները:  
Արմատին մէջէն ո՞ր հնչիւնը կորաւ, երբ վրան զանազան մասնիկներ աւելցուցինք:

## 45.

Արտագրել հետեւեալ բառերը ու քովը դի՛ր իրենց արմատը.

**Մսեղէն**—..., մրգեղէն—..., սրտոտ—..., ջրային—..., կնոյ—..., գրական—..., մտաւոր—..., ամսական—...

## 46. Մ Ե Ր Շ ՈՒ Ն Ը

**Մեր հարևանին շունը գարնան երեք հատ ձագ բերաւ:**  
Հարևանը մէկ հատը խոստացէր էր եղօրս:

Երկու շաբաթ ետքը քօթօթները արդէն բաւական մեծ ցեր էին. հարևանի տղան մէկ հատը բերաւ մեզի:

Քոյրս անոր անունը Սկուկ դրաւ. ամենքս ալ շատ կը սիրենք մեր նոր տնեցին: Մայրիկս մեր կերածէն միշտ բաժին կը հանէ անոր համար:

Ու չարաճիճի շնիկը ամբողջ օրը կը խաղայու կը ցատկէ:

## 47. ՈՎԿ

Արտագրել վերի պատմութեան առաջին նախադասութիւնը:  
Ո՞վ է այդ նախադասութեան մէջ ձագեր ծնողը: Նունը բառին տակը զիծ մը բաշէ:

Արտագրել երկրորդ նախադասութիւնը:

Ո՞վ էր մէկ հատը եղօրս խոստացողը: Գիծ բաշէ հարեւան բառին տակը:  
Արտագրել յաջորդ նախադասութիւնը:

Դտի՛ր ո՞վ է այդ նախադասութեան մէջ բան մը ընողը. ո՞վ է շունը մէզի բերողը. այդ բառին տակը զիծ բաշէ:

Եւ այսպէս մէկիկ - մէկիկ կ'արտագրես բոլոր նախադասութիւնները. Եւ կ'ընդգծես այն բառերը, որոնք ցոյց կուտան քէ ո՞վ է բան մը ընողը:

## 48. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԷ

Ուրկէ՞ զտաք ձեր վիսիկը: Ամունը լի՞ն է: Ինչո՞վ կը կերակրէք: Ամրող օրը լի՞ն կ'ըթէ; Ամեմելն շատ լի՞ն բանի հետ խաղալ կը սիրէ: Բնաւ պատահե՞ր է, որ վրան բարկանար կամ զարնեք. լի՞ն: Մայրիկ գո՞ն է, որ տան մէջ կատու ումիք, լի՞ն: — Վերեադիրը զի՞ն՝ «Մեր վիսիկը»:



49. Ո՞Վ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՓՈԽԵ ԻՐ ՏԵՇԵ

Ո՞վ կը լողայ : Ո՞վ կը սողայ : Ո՞վ կը թռչի : Ո՞վ կը ցատ-  
է : Ո՞վ կը քալէ : Ո՞վ կ'ոստոստէ :

50. Ո՞Վ

Ո՞վ կ'առնէ քու հագուստներդ , կօշիկներդ . Ո՞վ կը հոգայ  
քու բոլոր պէտքերդ :

Ո՞վ կը լողցնէ , կը մաքրէ , կը կերակրէ քեզի . Ո՞վ կը կա-  
րէ , կը կարկտէ վրաղ-գլուխդ , ճերմակեղէններդ :

Ո՞վ կը խաղայ քեզի հետ :

Ո՞վ քեզի կարդալ-զրել կը սորվեցնէ , ո՞վ քեզի ուսում  
կու տայ :

51. ԶՄԵՌԸ

(Նայէ դեմի պատկերին)

Ի՞նչ տեսակ եղանակ է :

Ի՞նչ բաներն են ծածկուած ձիւնով :

Ո՞վ դուրս եկաւ ցանկապատին դռնէն :

Անոնք ի՞նչ են հագած և ինչպէս :

Չեռքերնին ո՞ւր են դրած , ի՞նչ պատճառով :

Ինչ ունին թևերնուն տակը :

Ուր կ'երթան :

52. ԻՆՉԷՆ ԴՄԱՑԱՐ


Քովի պատկերին մէջ տարուան ո՞ր եղանակն է , ինչքն  
իմացար :

Իսկ օրուան ո՞ր ժամանակն է , ինչէ՞ն իմացար :

Քոյր ու եղբայր ո՞ւր կ'երթան , ինչէ՞ն իմացար :

Ամեն մէկը քանի տարեկան է , ինչէ՞ն իմացար :

1008  
36032



Բառի որ մասին կ'ըսենք արմատ :  
Ի՞նչ ըսել է մասնիկ :  
Ի՞նչու համար է մասնիկ :

## 54. ՈՎԿ ԿՇՆԷ

Հողը ով կը մշակէ, իսկ հօտը ով կը պահէ :  
Ո՞վ կը բռնէ թոշուն ու գաղան :  
Ո՞վ կը կարէ մեր կօշիկները, իսկ ով կը թխէ հացը :  
Ո՞վ կը ծախէ բրինձը, քարիւղը, սուրճն ու շաքարը :  
Ո՞վ կը դարձնէ սուրճ ու խորը :  
Դպրոցի մէջ ով դաս կու տայ, իսկ որժնք կը սորվին :

## 55. ՈՎԿ

Երէկ իրիկուն ով կը խաղար քեզի հետ :  
Չեր դասարանը ամենէն աղուոր զիր զրողը ով է :  
Ո՞վ է գործեր քու գուլպաներդ :  
Ո՞վ անցաւ հիմա վարը վիզոցէն :  
Դասարանը ով կը նստի քու աջ կողմդ :  
Ո՞վ է դիմացի տան պատուհանէն նայողը :  
Քու ծանօթներէդ ով նուազել զիտէ :

## 56. ՄՐՍԱԾ ԹՌՉՈՒՆԸ

Յուրա օր մը Յակոբենց ընտանիքը կը տաքնար կրակա-  
րանին շուրջը :

Յանկարծ թոշնակ մը կեցաւ պատուհանին եղերքը ձիւ-  
նին վրայ : Խեղճ անասունը ամբողջ մարմնով կը դողար :  
Յակոբի հայրը կամաց մը բացաւ պատուհանը . և  
թոշնակը իսկոյն ցատկեց ներս :

Ի՞նչպէս ուրախացան տան փոքրիկները :

## 57. ՎԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷԶ ՈՎԿ ԻՆՉ ԿՇՆԷ

Արտագրէ առաջին նախադասութիւնը: Յակոբենց ընտանիքը ի՞նչ կ'ըներ:  
Ընդգծէ կը տաքնար բառը:

Արտագրէ երկրորդ նախադասութիւնը: Յանկարծ բոշնակ մը ի՞նչ բրաւ:  
Ընդգծէ այդ ինչ ընելը ցոյց տուող բառը: (ԿԵԳԱԿ):

Արտագրէ յաջորդ նախադասութիւնը: Գտի՛ր ինչ ընելը ցոյց տուող  
բառը եւ ընդգծէ: (ԿՐԴՊԱՅԱԲ):

Այսպիս մեկիկ-մեկիկ արտագրէ բոլոր նախադասութիւնները եւ ընդգծէ  
ամեն մեկուն մեջ ինչ ընելը ցոյց տուող բառը:

## 58. ՊԱՏՄԷՌ ՈՒ ԳՐԷՌ

Դում ալ տումը թուզում մը ումի՞ս, քու ծանօթներէդ ո՞վ ումի: Ուրկէ՞ է ձեռք  
բերուած այդ թուզումը: Ի՞նչ զոյթի փետուրմեր ումի, ի՞նչ չափի է, ի՞նչ ձեւի:  
Կ'երգէ՞, ե՞րբ, ի՞մսպէ՞ս: Ի՞նչ կու տաք ուտելու, ո՞վ կու տայ սովորաբար իր կերմ  
ու չուրը: Դիտա՞ծ ես իր լողաթալը, իմչպէ՞ս կ'ըմէ:

## 59. ՈՎԿ ԻՆՉ ԿՇՆԷ

Ի՞նչ կ'ընէ լրւացարարը :  
Ի՞նչ կ'ընէ բրուտը : Ի՞նչ կ'ընէ դերձակը :  
Ի՞նչ կ'ընէ ներկարարը : Ի՞նչ կ'ընէ ջուլհակը :  
Ի՞նչ կ'ընէ խանութպանը : Ի՞նչ կ'ընէ կառապանը :

## 60.

Նախադասութիւն մը գրէ՛, ուր բան մը ընողը մայրդ  
ըլլայ, իսկ մօրդ ըրածն ալ կարելը :

Նախադասութիւն մը գրէ՛, ուր բան մը ընողը պարտիզ-  
պանը ըլլայ, իսկ ըրած գործը՝ տնկելը :

Նախադասութիւն մը գրէ՛, ուր գործողութիւնը կատարողը  
շունը ըլլայ, իսկ իր կատարած գործողութիւնը՝ խածնելը:

61. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՈՂ

Մինչև հիմա մեր դիտած բոլոր նախադասութիւններուն մէջ բառերէն մէկը միշտ բան մը ընել կը ցուցընէր, այսինքն գործողութիւն մը կը ցուցընէր. իսկ բառերէն մէկ ուրիշն ալ՝ այդ գործողութիւնը կատարողը :

62. ՊԱՊԻԿԻ ՀԵՔԵԱԹՆԵՐԸ



Այս ծերունին մեր (ի՞նչն) է։ Արդէն (բանի՞) տարեկան մը երեւի կ'ըլլայ։ Այլ եւս աշխատելու (կ'երա՞յ)։ Ամբողջ օրը նստած է (ի՞նչպէս) և չիրուխը բերնին անընդհատ (ի՞նչ կ'ընէ)։ Չմեռ գիշերները մենք կը հաւաքուինք (ո՞ւր) ու իրմէն կը խնդրենք, որ մեզի (ի՞նչ ընէ)։

(Ի՞նչ տեսակ) հեքեաթներ գիտէ ան, և (որքա՞ն). մէյ մը որ սկսի՝ ալ (ի՞նը) չի գար :

63. ՊԱՏՄԵՌ ՈՒ ԳՐԷ

Իսկ դում շատ հեքեաթ ու պատմութիւններ գիտե՞ս։ Ո՞վ է պատմեր քեզի. Ե՞րբ կը պատմէ սովորաբար և իմշպէս։

Այդ հեքեաթներէն ամենէն աղուորը ո՞րմ է։ Դում իմքդ ալ ուրիշներում պատմել կը սիրե՞ս, որո՞ւմ կը պատմես։

64.

Ո՞րն է տիրող, տիրոջ, տիրանալ բառերուն արմատը։ Ո՞րն է գիրնալ, գիրուկ, գիրութիւն բառերուն արմատը։

Ո՞րն է սիրուն, սիրել, սիրող բառերուն արմատը։

Ո՞րն է բուսեղէն, բուսական, բուսնիլ բառերուն արմատը։

Ո՞րն է լուսաւոր, լուսեղէն, լուսատու բառերուն արմատը։

65.

Գրէ հետեւեալ բառերը ու բովը դի՛ք իրենց արմատը.

Պարտիզակ — …, նուիրել — …, կիսատ — …, դիմել — …, դիզած — …, միզոտ — …, շիկացաւ — …, պատուիրան — …, կուրութիւն — …, համբուրել — …, սուլիչ — …, գունաւոր — …, թունաւոր — …, յունարէն — …, քուրիկ — …։

66. ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ

Նկարագրէ՛ ձեր դասարանը. դպրոցի ո՞ր կողմն է, ո՞ր յարկի վրայ, ի՞նչ մեծութեան, բանի՞ լուսամուտ ու դուռ ունի, աշակերտներուն նստականի հեծութեան, բանի լուսամուտ ու դուռ ունի, աշակերտներուն նստականի հեծութեան, ի՞նչ կայ, պրուած, ո՞ր է գրադաստան, ի՞նչ տեսակի է, պատերո՞ւն ի՞նչ կայ։

67. ՄԵԿ ՀԱՏ ՈՒ ՇԱՏ

Դասարանը ուսուցչի համար մէկ աթոռ մըն է դրուած, թէ՛ շատ աթոռներ :

Իսկ աշակերտներուն համար մէկ նստարան մըն է դրուած, թէ՛ շատ նստարաններ :

Ինչո՞ւ ուսուցչի համար միայն մէկ աթոռ մըն է դրուած, իսկ աշակերտներուն համար շատ նստարաններ :

68.

Երկինքը մէկ լուսին մը կայ, թէ՛ շատ լուսիններ :

Երկինքը մէկ արեւ մը կայ, թէ՛ շատ արեւներ :


Երկինքի վրայ ի՞նչ կայ, որ մէկ հատ մը չէ, այլ շատ :

69.

Զեր գիւղի կամ քաղաքի մէջ ի՞նչ շէնք կայ, որ միայն մէկ հատ մըն է։

Իսկ ո՞ր շէնքերն են, որ շատ են, կամ որ մէկէ աւելի ե՞ :

Մեր դպրոցը մէկ ուսուցիչ մը միայն ունի, թէ՛ մէկէ աւելի ուսուցիչներ :



70. ԳՈՂ ԿԱՏՈՒՆ

Խոհանոցը պահարա-  
նին վրայ ի՞նչ ամաններ  
էր դրուած:  
Պղինձին մէջ ի՞նչ  
ուտելիք կար: Կճուճին  
մէջ ի՞նչ կար:  
Ո՞վ մտաւ խոհանոց,  
ի՞նչ զգաց ու ի՞նչ ուզեց:  
Ի՞նչ պատահեցաւ.  
Խսկ ինքը ի՞նչ ըրաւ:

71. ՏԱՆՏԻԿԻՆԸ

Ո՞վ գազեց խսկոյն խոհանոց:  
Ինչէն իմացաւ, որ դժբաղղութիւն մը պատահեցաւ:  
Ի՞նչ զգաց, երբ պատահածը տեսաւ:  
Գող կատուն հիմա ի՞նչ առնելիք ունի:

72. ՆԵՐ ՍԱՍՆԻԿԸ

Քանի՞ կատու ցատկեց պահարանին վրայ:  
Եթէ ցատկողները մէկէ աւելի ըլլային՝ նախորդ հարցին  
ինչպէս կը պատասխանէիր: Այդ պատասխանն ալ գրէ:  
Քանի՞ շերեփ ու բանի՞ քամիչ է կախուած խոհանոցի  
պատէն:  
Եթէ շերեփը մէկ հատէ աւելի ըլլար, խսկ քամիչը մէկ  
հատ՝ նոյն հարցին ինչպէս կը պատասխանէիր:  
Եթէ քամիչը մէկ հատէ աւելի ըլլար, խսկ շերեփը մէկ  
հատ՝ այդ նոյն հարցին ինչպէս կը պատասխանէիր:  
Եթէ թէ քամիչը և թէ շերեփը մէկէ աւելի ըլլար՝ ինչ-  
պէս կը պատասխանէիր:  
Մէկէ աւելի ըլլալը ցոյց տալու համար վերի բառերուն  
վրայ ի՞նչ մասնիկ աւելցուցիր:

73. ՆՈՐ-ՏԱՐՈՒԱՆ ԻՐԵԿՈՒՆԸ

Վերջապէս եկաւ և ՆՈՐ-ՏԱՐԻՆ:  
Մայրիկս մեղի համար համով անուշ-ապուր եփեց. հայ-  
րիկս ամեն տեսակ պտուղներ ու չոր միրգ բերաւ:  
Իրիկունը բոլորս հաւաքուեցանք մեր մեծ սենեակը:  
Պղտիկներս կարգով համբուրեցինք մամիկիս, հայրիկիս ու  
մայրիկիս ձեռքը: Մամիկս մեղի շատ օրհնեց:  
Քեռիս այսօր գեղեցիկ գիրք մը նուիրեց ինծի:

74. ՊԱՏՄԱԿ ՈՒ ԳՐԷ

Դում ո՞ր և ի՞նչպէս դիմաւորեցիր ՆՈՐ-ՏԱՐԻՑ:

75. ԵՕԹԱՆԱՍՈՒՆ-ԵՐԵՔԵՐՈՐԴ ՅՈՒԴՈԱԾԸ

Սուազին նախադասութեան մէջ ո՞ր բառն է, որ բան մը ընողը ցոյց  
կու տայ. Եւ ո՞ր բառն է, որ ցոյց կու տայ բան մը կատարուած ըլլալը:  
Գրէ՛ միայն այդ երկու բառը բով-բովի:

Յաշորդ նախադասութեան մէջ ո՞ր բառն է, որ գործողութիւնը կատա-  
րողը ցոյց կու տայ. Եւ ո՞ր բառն է, որ անոր կատարած գործողութիւնը  
ցոյց կու տայ: Գրէ՛ միայն այդ երկու բառը:

Եւ այսպէս շարունակէ՛ ամբողջ յօդուածը մինչեւ վերջը:

76. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԻ

Նախադասութեան մէջ գործողութիւնը ցոյց տուող բա-  
ռին կ'ըսենք ստորոգելի. Խսկ այդ գործողութեան կատա-  
րողը ցոյց տուող բառին կ'ըսենք ենթակայ:

77. ԶՐԻՆԸ

Երէկ ամբողջ գիշերը ձիւն էր եկեր: Մըթնալուս պէս  
վագեցի պատուհան:

(Նարունակէ՛ իներ ու նկարագրէ՛, թէ ինչպէս եր վարը փողոցն ու  
բակը, դիմացի շենքերն ու ծառերը, թէ ինչ կ'երեւար աւելի նեռուն՝ հորի-  
զոնին վրայ, ի՞նչ վիճակի մէջ. ձիւնը դեռ կը շարունակուի՛, թէ դադրած է:  
Բափուող ծիւնը ինչի՞ է նման):

### 78. ԵՐՈՒԱՆԴԻ ՆԿԱՐԸ

Երուանդը առաւ թերթ մը թուղթ, վերցուց մատիտը,  
նստեցաւ ու սկսաւ նկարելու:

Նկարեց սար մը, սարի փէշերուն անտառ մը, անտառին  
քովն ալ գետ մը: Միւս կողմն ալ նկարեց տուն մը, եկե-  
զեցի մը, ուրիշ շէնք մը, անոնց առջեւն ալ տերեւախիտ  
ծառ մը: Եւ այս բոլորի գլխուն խոշոր լուսին մը ու աստղ մը:

79.

Արտագրե՛ այս պատմութիւնը առանց ոչինչ բաց բողնելու, միայն այն-  
պէս, որ Երուանդի նկարած բաները ո՞չ թէ մէյ-մէկ հաս բլան, այլ մէկե-  
աւելի, ո՞չ թէ սար մը, անտառ մը, այլ սարեր, անտառներ:

80.

Արտագրածիդ վրայ մատիտով ընդգծէ այն մասնիկները, որ աւելցուցիր  
շատութիւնը ցոյց տալու համար:

81.

Արտագրե՛ հետեւեալ բառերը ու դիք ամեն մէկուն քովը իր շատը-  
օրինակ՝ հայ-հացեր, սեղան-սեղաններ:

Գիւղ—..., քաղաք—..., գիրք—..., տետրակ—..., գրիչ  
—..., թուղթ—..., աչք—..., ականջ—..., ոտք—..., գլուխ—  
..., բնակարան—..., աշակերտ—..., աշակերտուհի—...:

### 82. ԵՐՈՒՆԵՐ

Դիտէ ու զտի՛ր շատութիւնը ցոյց տալու համար՝ ո՞ր բառերուն վրա  
եր մասնիկը էկ'աւելցնես, ո՞ր բառերուն վրայ նէր մասնիկը: Գրի՛ առ  
հանած կանոնդ:

### 83. ԵԶԱԿԻ ԵՒ ՅՈԳՆԱԿԻ


Բառը երբ մէկ հատ մը ցոյց կու տայ կ'ըսենք եղակի  
բառ է. իսկ երբ մէկէ աւելին ցոյց աայ՝ կըսենք յոգնակի  
բառ է:

Բառի մը եղակին եթէ եր կամ ներ աւելցնենք՝ կը  
դառնայ իր յոգնակին:

24

### 84. ՆԱՄԱԿԸ

Աշխէնի հայրը ո՞ւր էր գացեր, ինչո՞ւ:  
Տնեցիք անհամբեր ինչի՞ կ'ըսպասէին: Ե-  
կա՞ւ վերջապէս սպասուածը: Անոր պա-  
տասխանը մայրիկը որո՞ւն զրել տուաւ.  
ինչո՞ւ ինքը չը զրեց: Գրուելէն ետքը նա-  
մակը ինչի՞ մէջ դրին. և ո՞վ տարաւ նե-  
տեց տուփը:



### 85. ԼԱՍՑԵ

Նամակի պահարանին վրայ ի՞նչ կը գրենք:  
Հասցէն ինչո՞ւ կը գրենք:  
Հասցէին վրայ ի՞նչ ու ի՞նչ պիտի գրենք, որ լրիւ ըլլայ  
ու նամակը չըլլայ թէ կորչի:  
Հայերէնէ զատ այդ միեւնոյն բաները ուրիշ ի՞նչ լեզուով  
պիտի գրենք. ինչնու:

### 86. ԼԱՍՑԵ ՄԸ

Ահա մեր մէկ ազգականի հասցէն, միայն հայերէն գրած.

### ՄԵԾԱՊԱԹԻՒ

Պարոն Յովհաննէս Մինասեան  
Այգեստան,  
ՎԱՆ

### 87. ՊԱՐՈՆ, ՏԻԿԻՆ, ՕՐԻՈՐԴ

Եթէ մօրդ, մեծ մօրդ կամ մէկ ուրիշ կնոջ հասցէն գրե-  
լու ըլլաս՝ պարոն բառ ին տեղը ի՞նչ պիտի դնես:  
Եթէ նամակ մը դրկել ուզես քրոջդ, չամուսնացած մօ-  
րաքրոջդ կամ ուրիշ մէկ աղջկայ անունով՝ տիկին բառին  
տեղը ի՞նչ բառ պիտի դնես:

25

88. ՀԱՍՑԵՆԵՐ

Գրէ հօրեղբօրս հասցէն. կ'ապրի Կ. Պօլիս, Համալ փողոց,  
թիւ 8. անունը Գէորգ է, իսկ մեր ընտանիքի անունը՝ Ճեր-  
մակեան:

Գրէ քրոջս հասցէն, ամուսնացած չէ, անունը Սաթենիկ  
է. մեր տունն ալ կիրասոն է, վերի փողոց:

Գրէ մօրս հասցէն. անունը Արուսեակ է:

Գրէ ձեր հասցէն, ձեր տան մեծի անունով:

89. ՀԱՅՐԻԿԻՍ ԴԱՐՁԸ

Հայրիկս քաղաքէն այսօր վերադարձաւ:

Ինծի համար բերեր էր ուետինէ գնդակ մը ու գունաւոր  
մատիտներ, մեծ քրոջս համար սիրուն գոզնոց մը, պղտիկ Ա-  
նուշի համար գլխու սանր ու կօշիկներ: Իսկ տան համար  
ալ պնակներ, բաժակներ, ջրի շիշ մը, սեղանի կապոյտ սըփ-  
ոց մը և պատէն կախելու լամպ մը:

Ինչպէս ուրախ էինք ամենքս ալ, երբ այս բոլոր բաները  
մէկիկ-մէկիկ դուրս կը հանէինք փայտէ արկղէն:

90.

Արտագրէ այս պատմութիւնը միայն այնպէս, որ հօրս բերած բաները  
դառնան եղակի՝ երե յոգնակի են, դառնան յոգնակի՝ երե եղակի են:

91. ՍԱՐՍԱՓԵԼԻ ՎՏԱՆԳԸ

Փողոցէն պղտիկ աղջիկ մը կ'անցնէր: Յանկարծ դիմա-  
ցէն կառք մը երեւցաւ. ձին կատաղի կը վազէր, կառապանը  
բոլոր ուժովը սանձերը կը քաշէր և ձին հազիւ հազ կեցաւ:  
Խեղճ աղջիկը անիւներուն տակը պիտի իյնար:

92.

Վերի պատմութիւնը արտագրելեղ ետք՝ ենթականերուն տակը զիծ քաշէ:  
Արտագրէ միեւնոյն պատմութիւնը նորէն՝ միայն այնպէս, որ եղակի  
ենթակաները յոգնակի դառնան:

93. ՊԶՏԻԿ ԲԵՌՆԱԿԻՐԸ

Կարօն քանի՞ տարեկան էր  
որ հայրը մեռաւ:

Հայրը ի՞նչ արհեստ ունէր,  
ի՞նչ ընելով կը վաստկէր իր  
ընտանիքին հացը:

Հօրը մեռնելէն ետքը ըն-  
տանիքը ի՞նչ վիճակի մէջ ին-  
կաւ:

Ծնտանիքի մեծ տղան հվ էր:  
Կարօն ի՞նչ մտածեց: Առ-  
տուն կանուխ ինչե՞րը հագաւ,  
ի՞նչը առաւ և ուր գնաց կե-  
ցաւ. ի՞նչ յոյսով:



94.

Կարօի յոյսը իրականացաւ, վարձեցի՞ն կարօն, թէ ոչ ի՞նչու:  
ի՞նչ կը կարձես՝ ինչով վերջացաւ կարօի այս պատմու-  
թիւնը:

Իսկ դուն ինչպէս կ'ուզէիր, որ վերջանար:

95.

Բեռնակիրը ի՞նչ կ'ընէ:  
Նաւավարը ի՞նչ կը վարէ:  
Ածխավաճառը ի՞նչ կը վաճառէ, ի՞նչ կը ծախէ:  
Երկար հասակ ունեցող մարդուն ի՞նչ կ'ըսենք մէկ բառով:  
Քաջ սիրտ ունեցող տղուն ի՞նչ տեսակ տղայ կ'ըսենք  
մէկ բառով:

Զիւնագունդ բառին մէջ քանի՞ արմատ կայ, որո՞նք են:  
Հաստագլուխ բառին մէջ քանի՞ արմատ է իրարու  
վրայ դրուած. որո՞նք են:

Օձաձուկ բառին մէջ քանի արմատ է իրարու վրայ  
բարդուած. որո՞նք են:

Հիւրասենեակ բառին մէջ որո՞նք են իրարու վրայ  
բարդուած արմատները :

## 97. ԲԱՐԴ ԲԱՌ

Չի ու տէր բառերէն շինէ բարդուած բառ մը :  
Նամակ ու բեր բառերէն շինէ բարդուած բառ մը :  
Շաքար ու կեր բառերէն շինէ բարդ բառ մը. ի՞նչ  
ըսել է այդ բառը :  
Քաղցը և համ բառերէն շինէ բարդ բառ մը. ի՞նչ ըսել է:  
Ի՞նչ տեսակ բառերուն կ'ըսենք բարդ բառ :  
Ի՞նչն կ'ըսենք բարդ :

## 98. ՊԱՏՄԵՌԻԿՐԵ

Ե՞րբ կ'ըսկուի Մեծ-Պահքը, քանի՞ շաբաթ կը տեսէ, ի՞նչո՞ւ կ'ըսեմք մեծ  
Պահք. զում ալ պահք կը բռնի՞ս, ծեր տումը ո՞վ կը բռնէ. Մեծ-Պահքին ուզիշ ի՞նչ  
սովորութիւն ունիք ծեր տումը: Ե՞րբ կու զայ Զատիկը, ի՞նչ կը բերէ իր հետը:  
Վերմազիու դիր «Մեծ-Պահք» :

## 99. ԵՍ

Գրիգոր հպարտ-հպարտ կ'ըսէր իր ընկերոջը՝ Տիգրանին.  
— Մեր դասարանին մէջ ամենէն վարժ կարդացողը ես  
եմ. ամենէն շուտ թուաբանութեան խնդիրները վճռողը ես  
եմ. ես եմ ամենէն զեղեցիկ նկարողը. ես առտուները ամենէն շուտ կու զամ դպրոց. ես մեր դասարանի առաջին աշակերտն եմ:

## 100. ԻՆՔՆ ԻՐՄԱՍԻՆ ԿԸ ԽՈՍԻ

Կը հաւտամք Գրիգորի այդ բոլոր ըսածներուն, ի՞նչո՞ւ  
քիչ մը կը կասկածինք :  
Կը հաւնի՞ս անոր այդ խօսուածքը, նոյնիսկ իր բոլոր  
ըսածները եթէ շիտակ ալ ըլլան :  
Ի՞նչո՞ւ չես հաւնիր, ի՞նչո՞ւ իր խօսուածքը անախորժ է  
քեզի :

## 101. ԴՈՒՆ

Գրե՛ միեւնոյն պատմութիւնը առանց բան մը աւելցնելու եւ առանց  
բան մը պակսեցնելու, միայն պիտի պատմես Տիգրանի բերնեն, ո՛չ Գրիգորի:  
Խօսողը Տիգրանը պիտի ըլլայ, լոռողը՝ Գրիգորը: Գրիգորի գովեստը ընողը  
Տիգրանը պիտի ըլլայ:

## 102.


Ես ձեւով պատմուածին մէջ խօսողը ո՞վ է և որո՞ւ մա-  
սին կը խօսի :  
Դուն ձեւով պատմուածին մէջ խօսողը ո՞վ է, խօսքը  
որո՞ւն կ'ուղղէ և որո՞ւ մասին կը խօսի :  
Խոկ եթէ Տիգրանը խօսի Գրիգորի մասին, բայց ո՞չ Գրի-  
գորի հետ, այլ մէկ ուրիշ մարդու հետ, այն ատեն կընայ  
նորէն դուն ըսել : Հապա ի՞նչ պիտի ըսէ :

## 103. ԱՆ

Գրե՛ միեւնոյն Գրիգորի պատմութիւնը առանց ոչինչ պակսեցնելու,  
միայն այնպէս, որ պատմողը Տիգրանը ըլլայ եւ պատմէ իր հօրը, կամ մեկ  
ուրիշին՝ Գրիգորեն զատ որուն որ կ'ուղես:

## 104. ԵՐԵՔ ԴԷՄՔ

Բան մը կարելի է ըսել երեք դէմքով, այսինքն երեք  
ձեւով:  
Առաջին դէմք է, երբ կը խօսինք ես ըսելով :  
Երկորորդ դէմք է, երբ կը խօսինք դուն ըսելով:  
Երրորդ դէմք է, երբ կը խօսինք ան ըսելով :



### 105. ԱՆՍԽՈՐՃ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գոհարիկը քանի՞ տարեկան էր:  
Օր մը եղօրը հետ ուր կերթար: Ի՞նչ տեսակ օր էր:  
Ճամբան յանկարծ ի՞նչ մը ելաւ անոնց դէմը, ի՞նչ ըրաւ,  
ինչնւ:  
Գոհարիկը ի՞նչ եղաւ. ի՞նչ ըրաւ եղայրը:  
Դէպքը ինչնվ վերջացաւ:

### 106. ՊԱՏՄԿ ՈՒ ԳՐԷ'

Միայն սագէ՞ն կը վախմար Գոհարիկը. հապա ուրիշ ի՞նչ բամերէ, ի՞նչ տեսակ աղջիկ էր աթիկա:  
Դում ալ կը վախմա՞ս այդ բոլոր բամերէն, դում ի՞նչ բամերէ կը վախմաս, ի՞նչո՞ւ:  
Ի՞նչ պիտի դմես պատմութեամդ վերմագիրը:

### 107.

Նորեն զրե՛ Գյոհարիկին ու Եղբօրչ պատմիած դէպէր նիշտ այն կարգով, ինչպէս անգամ մը սրդեն զրած ես եւ առանց ոչինչ բաց բողնելու. միայն այնպէս, որ պս տմողը ինքը եղբարչ ըլլայ ու պստիկ իր իրաշը՝ Գոհարիկին կարծես յիշեցնելու համար:

### 108. ԵՍ ԴՈՒՆ, ԱՆ

Հայրը ըսաւ ուսուցչին.

— Միհրանս այս տարի վեցը լրացուց : Ան արդէն դըպրոց պէտք է մտնէ սեպտեմբերին :

Հայրը ըսաւ Միհրանին.

— (Գրէ միեւնոյն բանը փոխելով ինչ որ անհրաժեշտ է:)

Միհրանը ըսաւ.

— (Գրէ միեւնոյն բանը՝ փոխելով պէտք եղածը):

### 109.

Բան մը քանի՞ դէմքով կրնայ ըսուիր:  
Վերի երեք ձեւերէն որո՞ւն ըսածն է առաջին դէմքով:  
Ինչէն իմացար:  
Ատոնցմէ՞ ո՞րն է երկրորդ դէմքով: Ինչո՞ւ:  
Ո՞րն է երրորդ դէմքով: Ինչո՞ւ:

### 110. ՊԱՏՄԿ ՈՒ ԳՐԷ'

Տարուան ո՞ր եղանակի է հիմա. Ըկարազրէ ի՞նչ կ'ըլլամ ձիւմերը սարերում վրայ, ի՞նչ կ'ըլլամ սարերը, գետերը, ի՞նչ կ'ըլլամ դաշտերն ու արօտները, ծառերն ու թռչումները. ի՞նչ զգացում ուժին հիմա ամենքը. դո՞ւմ ինչ կ'ըզգաս հիմա. իմչո՞ւ: Վերթազիրը կը զնես «Գարում»;

### 111.

Քու զրած «Գարուն» յօդուածիդ մեջ ուղղահայեաց (կեցած) գծիկներով զատէ՝ նախադասուրիները, իրարմէ: Վերջն ալ ընդգծէ՝ ամեն մեկ նախադասուրեան ենքական :

### 112.

Ինչի՞ն կ'ըսենք ենթակայ:

Ինչի՞ն կ'ըսենք ստորոգելի:

Իսկ ինչի՞ն կ'ըսենք նախադասութիւն:



### 113. ՊԱՏՄԵ՛ ՈՒ ԳՐԵ՛

Պատմէ՛ ի՞նչ որ կը տեսմես վերի պատկերի մէջ և ի՞նչ որ անոր վրայ կը մտածես՝ թէ ո՞վ է ամ, ուրկէ՞ կու գայ, ո՞ւր կ'երթայ, ի՞նչ ըմելու:

### 114. ՓՈԹՈՐԻԿ

Վահանը ուր էր դաշեր պառյտի, ե՞րբ ուր որու հետո: Օ՞ր առաջ ի՞նչպէս էր, յանկարծ ի՞նչպէս փոխուեցաւ: Ո՞ւրկէ երեւցան ամպերը, ի՞նչ եղաւ արեւը: Հով կար: Վերջապէս ի՞նչը սկսաւ և ի՞նչ տեսակ: Ո՞ւր մտան պատսպարուելու համար: Ինչպէս վերջացաւ անոնց պառյտը:

### 115. ՊԱՏՄԵ՛ ՈՒ ԳՐԵ՛

Նկարագրէ՛ քու վերջին պառյտդ. որո՞ւ հետ էր. ի՞նչ տեսակ եղանակ էր, ո՞ւր գացիր, ի՞նչ ըրիր, ի՞նչ տեսար, ի՞նչպէս վերադպրօքաք, քեֆի տեղի էր:

### 116.

Ի՞նչ ըսել է երկաթագործ, հացագործ: Ի՞նչ ըսել է մըզավաճառ, մսավաճառ: Ի՞նչ ըսել է ուսումնասէր, աշխատասէր: Այս տեսակ բառերուն ինչո՞ւ համար բարդ բառ կ'ըսենք: Այս բառերուն մէջ երկու արժատները իրարու կապող հնչիւնը ո՞րն է:

### 117. ԱՆՈՆՔ ԵՆ

— Մեր թաղի ամենէն չարածիմի տղաքը այդ երեքն են՝ Յովհաննէսը, Թադոսը և Սիմոնը: Անոնք են, որ ամենէն շատ կը պոռան ու կը կանչեն: Անոնք են, որ պատէ պատ կը ցատկուտեն ու ծառերուն վրայ կը մագլցին: Անոնք են թռչուններուն ու կատուններուն հոգին հանողը: Մէկ խօսքով՝ ուր կոիւ կայ ու աղմուկ՝ անոնք են, մէ՛շտ անոնք:

(Արտագրէ՛ այս յօդուածը ու տակը աւելցո՞ւր՝ թէ բու կարծիքովդ ո՞վ է այս գանգատը ընողը եւ որո՞ւն կ'ընե:

### 118. ԱՆ Է

Ինչպէս կ'ըլլայ վերի գանգատը, երե չարանինի եղողը միայն մէկը ըլլր, օրինակ միայն Սիմոնը: Գրէ՛ նոյն պատմուքիւնը այդ ձեւով:

### 119. ՀԻԿԻՐԵՐ

Պղտիկ Յուլիանէն տունը մինակ էր:

— Թա՛կ, թա՛կ.— յսուեցաւ դռան զարկը:

— Ո՞վ է.— հարցուց Յուլիանէն դռան ետևէն:

— Մե՛նք ենք. բա՛ց.— եղաւ պատասխանը գուրսէն:

— Դուք ո՞վ էք.— հարցուց նորէն Յուլիանէն:

— Բա՛ց, Յուլիանէ՛, մենք ենք. ես ու Շողակաթը ու Աբրահամը:

— Ա՛խ, դուք էք.— ճանչցաւ վերջապէս Յուլիանէն ու դուռը բացաւ:

### 120. ՀԻԿԻՐԵՐ

Գրէ՛ մաեւնոյն խօսակցուքիւնը, բայց այնպէս, որ եկողը միայն մէկ հոգի մը ըլլայ, օրինակ Շողակաթը:


### 121

Ե՞րբ է բառ մը եղակի, ե՞րբ է յոզնակի:

Ա՞ն ու անոնք. ո՞րն է եղակի, ո՞րն է յոզնակի:

Ինչպէս կ'ըլլայ դուն բառի յոզնակին:

Ինչպէս է մենք բառի եղակին:



## 122. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԵ

Ի՞նչ կը կարծիս, ո՞վ ին առնք, ուրկէ, ո՞վտեղ պատահեր եմ իրարու, ի՞նչ կը պատուի, ի՞նչ ընել կ'ուզեմ:

Իմբու դի՛ր և յարմար վերթաշիր մը:

## 123. ԻՆՉ Կ'ԸՆԵՆՔ

Արտագրէ յաջորդ տողերը ու ընդգծէ ստորոգելիները.

**Ես կը գրեմ.**

**Դուն կը նկարես.**

**ան կը կտրէ.**

**մենք կը վագենք.**

**դուք կը ցատկէք.**

**անոնք կը դիտեն:**

## 124. Է

Բառերուն վերջը ք տառէն առաջ միշտ կը՝ գրուի է: Օրինակ՝ կերէք, մի՛ ուտէք, կը խմէք, (զրեցէք ուրիշ օրինակներ ։

## 125

**Ես ի՞նչ կ'ընեմ.** դուն ի՞նչ կ'ընես. ան ի՞նչ կ'ընէ. մենք ի՞նչ կ'ընենք. դուք ի՞նչ կ'ընէք. անոնք ի՞նչ կ'ընեն:

Պատ սխանե՛ այս հարցերուն օգտուելով յաջորդ զոյզ-զոյզ բառերեն, այնպես որ բոլոր զոյզերն ալ մեյ-մեկ անգամ գրծածուին:

**Բոնել ու նետել, սանրել ու մաքրել, գնել ու ծախել,**  
**մանել ու հիւսել, ձևել ու կարել, բերել ու դիզել:**

## 126. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԵ

Տարւան չորս եղանակներէն ո՞րը աւելի կը սիրես, ի՞մչո՞ւ: Մնացած եղանակներէն ամեն մէկը թեզի համար ի՞մչո՞վ է գրավէս ու սիրելի: Վեհագիրը դի՛ր «Տարւան չորս եղանակները»:

## 127. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԵ ՃԱՐՈՒՆԱԿՈՒՒ

Գարունը եկաւ ու ամենքը գործի վրայ են:

**ՄԵՆՔ մեր արտերը** (ի՞նչ կընենք, ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ):

**Դուք ձեր այգին արդէն ամբողջապէս** (ի՞նչ կ'ընենք, ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ):

**Բանջարանոցին տէրը արդէն** (ի՞նչ կ'ընենք, ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ):

## 128. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՒԱՐՏԵՑԱՒ

Վերջապէս աւարտեցինք:

**ՄԵՆՔ մեր արտերը արդէն բոլորովին** (ի՞նչ ըրինք, ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ):

**Դուք ձեր այգին արդէն ամբողջապէս** (ի՞նչ ըրինք, ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ):

**Բանջարանոցին տէրը արդէն** (ի՞նչ ըրաւ, ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ):

## 129. ԻՆՉ Կ'ԸՆԵՔ

— Հոտ ի՞նչ կ'ընէք.— հարցուց մայրիկը Զապէլին:

— Ես ու Յակոբը դաս կը սերտենք. Գէորգը իր ձիուն հետ կը խաղայ. քուրիկս կաբ կը կարէ. իսկ հայրս իր լրափը կը կարդայ:


Արտագրելելով եսիր ընդգծէ բոլոր ստորոգելիները:

## 130. ԻՆՉ ԸՐԻՔ

— Ներսը ի՞նչ ըրիք.— հարցուց մայրը Զապէլին, երբ Զապէլի գործը աւարտեց ու դուրս եկաւ:

— (Դրէ՛ Զապէլին պատասխանը, միայն այնպէս, որ բոլորն ալ արդէն իրենց գործերը աւարտած, վերջացուցած ըլլան:)

Ծնդգծէ նորեն բոլոր ստորոգելիները:



131. ԹՌՉՈՒՆ ԿԸ ԲՈՒԵՆ

Ո՞վ են, ի՞նչ կը լնեն:  
Ի՞նչ մը կը դնեն գետինը, թելը ինչքն կը կապեն. իրենք  
ուր կը պահւըտին:  
Յոյս կայ որ յաջողին, ինչքն կը գուշակես:  
Ի՞նչ պիտի ընեն բռնուած թռչունը:

132. ԹՌՉՈՒՆ ԲՈՒԵՑԻՆ

Ո՞վ են, ի՞նչ ըրին:  
Ի՞նչ մը դրին գետինը, թելը ինչքն կապեցին. իրենք ուր  
պահւըտեցան:  
Յաջողեցան, ինչքն գուշակեցիր:  
Բռնուած թռչունը ի՞նչ ըրին:

133

Պատմելու այս երկու եղանակներէն ո՞րը ցոյց կու տայ,  
թէ գործողութիւնը արդէն աւարտած է:  
Պատմելու այս երկու եղանակներէն ո՞րը ցոյց կու տայ, թէ  
գործողութիւնը դեռ շարունակուելու վրայ է, դեռ անաւարտ է:  
Այդ տարբերութիւնը ստանալու համար ենթականմըրը  
փոփոխութեան ենթարկեցինք, թէ ստորոգելիները:

134 ԱՆԱԿԱՐՏ ՈՒ ԱՒԱՐՏ

Արտագրէ նետեւեալ անաւարտ եղանակով ըսուածները եւ անոնց տակը  
աւելցուր նոյնը աւարտ եղանակով.

**Ես այսօր կը կարդամ, կը գրեմ ու կը նկարեմ:**

**Ես այսօր (ի՞նչ ըրի):**

**Սեղրակը շունէն կը վախնայ, վախէն կը դողայ ու կը փախչի:**

**Սեղրակը շունէն (ի՞նչ ըրաւ):**

**Դուն տախտակները կը տաշես, կը գամես ու նստարան կը շինես:**

**Դուն տախտակները (ի՞նչ ըրիր):**

135 ԱՒԱՐՏ ՈՒ ԱՆԱԿԱՐՏ

Արտագրէ նետեւեալ աւարտ եղանակով ըսուածները եւ անոնց տակը  
աւելցուր նոյնը անաւարտ եղանակով.

**Բանուորները թաց կաւը կտրտեցին, չորցուցին ու ա-  
ղիւս պատրաստեցին:**

**Բանուորները թաց կաւը (ի՞նչ կ'ընեն):**

**Դուք ցախերը ժողվեցիք, զիղեցիք ու վառեցիք:**

**Դուք ցախերը (ի՞նչ կ'ընեք):**

**Զանգը տալուն պէս մենք բոլորս դուրս թափեցանք, վազ-  
վկեցինք ու խաղացինք:**

**Զանգը տալուն պէս մենք բոլորս (ի՞նչ կ'ընեն):**

136 ՊԱՏՍԵ՛ ՈՒ ԳՐԵ'

Ո՞վ է, ո՞ւր կ'երթայ առտուն, ի՞նչ կը վմառէ, իմչպէ՞ն կը  
բռնէ, ե՞րբ կը դառնայ ետ, ի՞նչ կ'ընէ իր բռնածը՝ եթէ շատ  
ըլլայ. իմչո՞ւ:

Այսօր ի՞նչ մըն է բռներ, ո՞ւր կը տամի, ի՞նչ պիտի ընէ:  
Վերմագիրը զի՞ր՝ «Որսորդը»:



Նորեմ գրե՛ որսորդի պատմութիւնը այս անգամ աւարտ եղանակով։  
այսինքն՝ առտուն ո՞ւր գնաց, ի՞նչ փնտուց, ի՞նչ բռնեց, եւայն։

## 138. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Շատ խօսողին ի՞նչ կ'ըսենք մէկ բառով։ Միս ուտողի՞ն,  
գիր գրողի՞ն, հաց թխողի՞ն, դաս տուողի՞ն, կօշիկ կարողի՞ն,  
ձուկ որսացողի՞ն։

## 139. ԶԱՐՎՍԻՐՏ ՏՀԱՆ

— Այ, բնյնը, հնն ծառին վրայ.— ըսաւ Արրահամը։  
Ըսաւ, կօշիկները հանեց ու ելաւ ծառը։ Ելաւ, ելաւ  
ճիւղէ. ճիւղ, աշխատեցաւ, որ հանի բոյնին։

Եւ վերջապէս ձեռքը երկնցուց, առաւ բոյնին մէջ եղած  
մէկ հատիկ հաւկիթը. բայց հաւկիթը սահեցաւ ձեռքէն, ին-  
կաւ ու կոտրուեցաւ։

Արրահամը բարկութենէն խառնեց ու աւրեց բոյնը ու  
կատղած վար իջաւ ծառէն։


## 140. ԶԱՅՆԱԽՈՐ ՈՒ ԲԱՂԱԶԱՅՆ

Որնք են ձայնաւոր տառերը։ (ա, ե, է, ի, ո, օ, ու)  
Գրէ՛ ձայնաւորով սկսող քանի մը բառեր։  
Հետևեալ բառերուն մէջէն արտագրէ՛ բաղաձայնով սկսող-  
ները՝ տեսաւ, ըսաւ, վազեցի, աշխատնցայ, ելաւ,  
խաղաց, եղայ, հիւսեցի, առաւ, տարաւ։

Արտագրածներուդ տակը գրէ՛ անոնց անաւարտ եղանակը։  
Արտագրէ՛ վերի բառերէն ձայնաւորով սկսողները։  
Ատոնց տակը դի՛ր ամեն մէկուն անաւարտ եղանակը։  
Ձայնաւորի առջնը «կը» չեն գրեր, այլ «կ'». ինչու։

## 141

Արտագրէ՛ չարասիրտ տղու պատմութիւնը՝ անոր աւարտ եղանակը  
փոխելով անաւարտի։ Ուշ դարցուր կը-ին ու կ'-ին։



## 142. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԵ

Գրէ՛ ինչ որ կը տեսնես քովի  
պատկերին մէջ։ Զը մոռնաս յի-  
շելու թէ՛ ո՞վ է շիմեր այդ թը-  
ուցիկը, ինչո՞ւ է շիմեր, կամո-  
նաւո՞ր ու յաջող է շիմածը, ին-  
չո՞ր կը դատես. ըմկերները ի՞նչ  
կ'ըզգան, ի՞նքը ինչ կ'ըզգայ։

Վերապիրը զի՞ր՝ (Թուոցի),  
կամ ինչ որ ինքդ աւելի յար-  
մար կը զտի՛ն։

## 143. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԵ

Դո՞ւմ որ խաղը շատ կը  
սիրես, ինչո՞ւ ինչպէ՞ս կը խա-  
ղաս, տարուայ ո՞ր եղաթակին,  
ե՞րբ, ո՞ւր, որո՞ւ հետ։ Վերմա-  
գիրը զիր սիրած խաղիդ անումը,  
կամ ինչ որ ինքդ աւելի յարմար  
կը գտնես։

## 144. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԸ ԼՐԱՑՆՈՂ ԲԱՌԵՐ

«Տղան թոռոցիկ կը թոցնէ» նախադասութիւն մըն է. այդ  
նախադասութեան մէջ ո՞րն է ենթական, և ո՞րը ստորոգելին։

Եթէ միայն այդ երկու բառը ըլլար նախադասութեան մէջ՝  
բառածի միտքը կը հասկցուէ՛ր, կը հասկնայի՞ր տղու ինչ  
ըրած ըլլալը։

Այդ նախադասութեան մէջ ո՞րն է այն բառը, որ ըսեր ենք  
մեր միտքը պարզ հասկցնելու, մեր ըսելիքը լրացնելու համար։

145. ԳԵՐԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՈՑԻՆ ՄԷԶ

Յաճախորդը կ'ընտրէ կտորը, վարպետը չափը կ'առնէ,  
օդնականը կտորը կը ձևէ, աշակերտները կարերը կը կարեն։  
Երբ անոնք աշխատանքը կը վերջացնեն, դերձակը դրամը  
կ'ըստանայ և յաճախորդը հագուստը կը տանի։

Արտազրելելի ետքը ընդգծէ՝ այն բոլոր բառերը, որ ո՞չ ենթակայ են և  
ո՞չ ստորոգելի, այլ անոնց միտքը կը լրացնեն։

146

Արտազրէ՝ հետեւեալ նախադասուրիւնները եւ կետերուն տեղը լրացու-  
ցիշ մը դի՛ք, լրացնող բառ մը դի՛ք։

Հովք... մարեց : Քոյրս... կը գործէ : Կատուն... բոնեց :  
Մայրիկս... կը լըւայ : Գիւղացին... կը հնձէ : Սայլապանը...  
լծեց :

147

Պատասխանէ՝ ու պատախանիդ լրացուցիչները ընդգծէ։

Բրուտը ի՞նչ կը շինէ :  
Զրկիրը ի՞նչ կը կրէ :  
Կօշկակարը ի՞նչ կը կարէ :  
Խոհարարը ի՞նչ կ'եփէ :  
Ճարտարապետը ի՞նչ կը շինէ :  
Գրավաճառը ի՞նչ կը ծախէ :  
Գրաշարը ի՞նչ կը շարէ :

148. ՊԱՏՄԻ ՈՒ ԳՐԷ


Քու հայրդ (կամ մեծ եղայրդ, կամ մօրեղպայրդ) ի՞նչ գործի է, ի՞նչ կ'ընէ  
կամ ի՞նչ կը շիմէ. ո՞ւր է իր խանութը, զործը կամ աշխատանոցը. Թկարազը՝ իր  
աշխատութիւնը, ի՞նչ կերպով կ'ընէ, ի՞նչո՞վ կ'ընէ և որո՞ւ նետ կ'ընէ։

149 ՄԵՐ ՆՈՐ ՏՈՒՆԸ

Մենք նոր տուն մը շինեցինք այս տարի : Նախ մշակները  
(ի՞նչը) փորեցին, ետքը որմնադիրները բարձրացուցին (ի՞նչե՞րը),  
ատաղձագործը ծածկեց (ի՞նչը). այլ և դրաւ (ի՞նչերն ու ի՞նչերը):  
Թիթեղագործը (ի՞նչ) քաշեց կտուրի վրայ ու շինեց (ի՞նչերը), որ  
ջուրը վար վագէ։

150 ԼՐԱՑՈՒՑԻՉ

Վերի նախադասութիւններուն մէջ քու աւելցուցած բա-  
ռերդ ենթակայ են, ստորոգելին, թէ լրացուցիչ։  
Ինչու այդ անունը կը կրեն։




151. ԳԵՐԱՆ ԿԵ ԽԱՇԱՆ

Նկարազրէ՝ ինչ որ կը տեսնես պատկերին մեջ, քե ո՞վ են, ի՞նչ կ'ընեն.  
ինչպէս են շիներ իրենց խաղալիմբ, ուրկի՞ են գտեր. նիմա անոնցմէ ամեն  
մեկը ի՞նչ կ'ըզգայ (գո՞ն է. կը վախնայ. ուրա՞խ է, քե՞ ինչ)։

152. ԽԱՇԵՐ

Ես հիմա վէգ կը խաղամ, դժուն ի՞նչ կը խաղաս, քոյրդ  
ի՞նչ կը խաղայ։

Մենք շուտ-շուտ գնդակ կը խաղանք, դժուք ի՞նչ կը խա-  
ղաք, աշակերտուհիները ի՞նչ կը խաղան։



153. ԶԵՆՔ ՈՒ ԳՈՐԾԻՔ

Քովի իրերէն որո՞նք են զէնքերը  
և որո՞նք զործիք են:  
Զէնքը ինչու համար է, իսկ ինչու  
համար է զործիքը:

Շամփուր, տազանակ, հրացան, սուր, բան,  
թի, եղան, կացին, ցաքատ.

154. ԻՆՉՈՎ

Պարտիզանը ինչով կը կտրէ անպէսք ոստերը:  
Ան ինչով կը կտրէ չորցած ճիւղերը:  
Պարտիզանը ի՞նչ կ'ընէ բահով ու թիով:  
իսկ ի՞նչ կ'ընէ եղանով:


155. ԾԵՓԱՅՈՎ, ՍՂՈՑՈՎ, ՏԱՇՈՑՐՎ, ՈՒՐԱԳՈՎ

Որմնադիրը պատը ի՞նչով կը ծեփէ:  
Անտառապահը ծառերը ինչով կը կտրէ:  
Ատաղձագործը տախտակները ինչով կը տաշէ:  
Կահագործը տախտակները ինչով կը դամէ:  
Փայտատը փայտը ինչով կը կտրտէ:  
Դերձակը կտորը ինչով կը ձեէ:  
Ան հագուստները ինչով կը կարէ:  
Մենք միսը ինչով կը կտրենք, ապուրը ինչով կը խմենք:

156. ՈՎ ՄԱՍՆԻԿԸ ՈՒՆԵՑՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Վերի ամեն մեկ նախադասութեան մեջ լրացուցիչները:

Ամեն մէկ նախադասութեան մէջ քանի լրացուցիչ կայ:  
Այդ երկու լրացուցիչներէն մէկը ի՞նչ մասնիկ ունի իր  
վրայ:



157. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԷ

Նկարագրէ ի՞նչ որ կը տեսնես այս պատոկերին մէջ, այլ և թէ, անոնք ո՞ւրկէ  
կու զան, ի՞նչ զործ ունին այս գերանին վրայ և թէ քու կարծիքով ինչո՞վ է վեր-  
ջանալու այս հանդիպումը:

Վերնազիրը զի՞ր «Յանոտ այծերը», եթէ յարմար կը զանես:

158. ՈՒՐԿԵ

Այգեպանը ուրկէ՝ կ'ըստանայ խաղողը. մենք ի՞նչ կը  
պատրաստենք խաղողէն:

Փայտատը ուրկէ՝ կ'ըստանայ գերանները. մարդիկ ի՞նչ  
կը պատրաստեն գերաններէն:

Գիւղացին ուրկէ՝ կ'ըստանայ ցորենը. մենք ի՞նչ կը շի-  
նենք ցորենէն:

159. ԷՆ ՄԱՍՆԻԿԸ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Վերի ամեն մեկ նախադասութեան մեջ բնդգձէ լրացուցիչները:

Ամեն նախադասութեան մէջ քանի լրացուցիչ կայ:

Այդ լրացուցիչներէն մէկը ի՞նչ մասնիկ ունի վրան:

160. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԷ

Ո՞ր գետի կամ գետակի վրայ է ձեր զիւղը. ի՞նչ է այդ գետին անումը,  
ո՞ր լեռներէն կու զայ և ո՞ւր կը թափի: Նկարագրէ մէծ է, թէ փոքր, ծանծաղ է  
թէ խորութիւն, ծուկ ունի՞ն, ի՞նչ ծուկ, ուրիշ ի՞նչ ունի, ուրիշ օգուտներ կու տայ ան  
ձեր զիւղին, ի՞նչ զուարձութիւններ կու տայ քեզի:

161. ՀՈՎԻԿՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿՐԱԿ ԸՐԻՆ

Հովիւը բուռով խշիր բերաւ, հանեց գրպանէն կայծքարը,  
զարկաւ քարը քարին, կայծ հանեց ու այդ կայծով խշիրը  
վառեց: Ընկերը շուտով մացառ ժողվեց անտառէն և հրահ-  
րեց կրակը այդ ցախով:

Այսոնք նստեցան, կրթնեցան ծառին, կը նայէին կրակին,  
մէ՛կ-կողմէն կը տաքնային, մէ՛կ-կողմէն հաց կ'ուտէին:

162

Արտագրէ ու զատէ նախադասութիւնները:

Ո՞րն է առաջին նախադասութեան ենթական: Ո՞րն է  
երկրորդի ենթական, հոն ըսուած է. ինչո՞ւ չէ ըսուած:

Քանի՞ նախադասութեան մէջ ենթակայ է հովիւ բառը:  
Խոկ րն կէ՞ր բառը, իսկ անոնք բառը:

Ուրեմն ենթական ամեն անգամ՝ անպատճառ կ'ըսէ՞նք  
կամ կը գրէ՞նք. Ե՞րբ չենք ըսեր:

163. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՆ ՄԱՍԻԿՈՎ

Արտագրէ նոյն յօդուածէն ով մասնիկով լրացուցիչները:  
Արտագրէ էն մասնիկով լրացուցիչները:

Արտագրէ ին մասնիկով լրացուցիչները:


Արտագրէ այն լրացուցիչները, որոնք իրենց վրայ այդ երեք  
մասնիկներէն ոչ մէկը չունին. այլ ուղղակի պարզ բառեր են:

164. ՓՈՐՆՉ

Քոյրս փրցուց կարմիր ու ճերմակ քանի մը վարդ, կա-  
պեց ու շինեց փունջ մը: Փունջին աւելցուց քանի մը մե-  
խակ ու նարզիզ, փունջէն փետակ բոլոր չորցած ու վնաս-  
ուած տերևները և ամբողջ փունջը դրաւ ջուրը: Հիմա այն-  
պէս հպարտ է իր փունջով:

165. ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԶՈՐՍ ԶԵՒԾ

Բառ մը երբ լրացուցիչ է կրնայ գործածուիր չորս ձեռով.  
ուղղակի բառը — օրինակ՝ փունջ կամ փունջը  
վրան ով մասնիկը — օրինակ՝ փունջով  
վրան էն մասնիկը — օրինակ՝ փունջէն  
վրան ին մասնիկը — օրինակ՝ փունջն



166. ՊԱՏՄԵ ՈՒ ԳՐԵ

Տարւայ ո՞ր ժամանակն է, ո՞վ եթ, ո՞վ եթ եկեր, իմչո՞ւ, իմչպէ՞ս կ'ապրիմ:  
Դում ալ եղե՞ր ևս սարերու վրայ, ե՞րբ, իմչո՞ւ, ժամանակդ իմչպէ՞ս կ'ամցմէիր, անմ  
իմչպէ՞ս էք շուրջդ, ի՞նչ տպառութիւն է, մեացեր մէջդ:

167

Փակազծի մէջ դրուած լրացուցիչները դի՛ք այն ձեւով, որ միտք դուրս գայ.

Մեր գըացին (գոյլ) ջուր կը քաշէ (հոր):

Պարտիզանը (քաղկենակ) գլուխը ծածկեր է, որ պաշտ-  
պանուի (արեւ):

Ծերունին իր (գաւազան) կը յենուի քալելու ատեն:

Սուրը կը կապեն (մէջ), զլխարկը կը դնեն (գլուխ), թաշկի-  
նակը կը դնեն (գրպան):

Մենք մեր հագուստներն ու ուտելիքները կը գնենք (դրամ)  
և կը գնենք (զուկայ):

Կովը (ոսք) զարկաւ (աման) ու (կար) թափեց:

Այս գիրքը տար տնը (մարդու մը անունը):

Ես նամակ մը ստացայ (բաղի մը անունը) և նամակ մըն ալ  
դոկեցի (նոյն բաղին անունը):

Գէորգը (փողոց) հանդիպեցաւ իր (բարեկամ) ու տարաւ (տուն):

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Նախորդ երեսներուն մէջ դրուած վարժութիւնները կարելի է վերածել հնագ խումբի:

ա. Քանի մը յօդուած պարզ արաւագրութեան համար է, կամ՝ ամբողջովին պատրաստ կամ թեթև յրացումներով. առանք մէկ կողմէն կը ծառայէն ուղղագրութեան այլ իրրեւ օրինակ շարագրութեան, միւս կողմէն ալ յաջորդ վարժութիւններուն մէջ զանազան ուղղագրութեամբ չահապունելու: Պէտք է վարժեցնենք, որ աշակերտաները չորսանկարնեն տառաւառ կամ վանկ-վանկ, ալ զրեն քանի մը բառ միասին կամ զոնէ բառ-բառ, նախապէս բառերուն գրութիւնը ուշագրութեամբ դիտելին եաքը:

բ. Յօդուածներուն մէկ մեծ մասը իրարմէ տեղի կամ նուազ անկախ հարցեր են, որոնց պատասխանները պէտք է զրէ աշակերտը և որոնք ընտրուած են դասողութեան, արտայայտութեան կամ բառադիտական նովաւայներով: Դասարանին մէջ աղաւաք պէտք է կորդան այդ հարցերը և պէտք է պատասխաննեն հարցերուն: Պատասխաններուն մէջ եթէ պատահին բառեր, որոնց գրութիւնը որեւէ գծուարտութիւն ունի, ուսուցիչը նախապէս պէտք է հարթէ: աշ մէնին աղէկն է՝ ուղղակի ինքը զրէ գրատախատկին կատաձելի բառը խոչոր ու յստակ առաւերով: Բուն գրութիւնը աղաւաքը կը կատարեն դուրսը ամեն մէկը իր համար: Աւելորդ է ամեն որբագրութիւն. յաջորդ դասին պէտք է ստուգուի միայն, որ գրած բլան, ան ալ մաքուր ու կանոնաւոր:

գ. Յօդուածներուն մէկ որիշ մասը հարցերու շարք մըն է, կապուած նկարի մը կամ ոչ, և կը կազմէ ամբողջական նիւթ մը: Այս կառուներուն էական նպատակը շարադրական մարզանքն է, մտքերու արաւայայտութիւնը յաջորդական կապակցութեամբ, ամբողջութիւն մը կազմելու ճամբան և օրինակը: Դասարանին մէջ նախ պէտք է սահանաք աշակերտներէն այդ հարցերուն լրիւ պատասխանները. վերջը մէկ-երկու անգամ պատմել պիտի առանք այդ կերպով առաջ եկած ամբողջութիւնը, հարթենք պիտի գրատախատկին վրայ ուղղագրական տեսակէտէն հաւանական դժուարութիւնները և պիտի պատուիրենք, որ տունը զրեն այդ արդէն ամբողջապէս մշակուած շարադրութիւնը: Յաջորդ դասին մէկ-երկու հոգիի կարդացնել կու տանք իրենց գրածը. և ամեն ընթեցումէ եաք կ'ննթարկենք իրենց ընկերներու քննադատութեանը, թէ ո՞ր կառուները մոուցեր են, ո՞ր կատրները իրենց աեղը չեն զրեր, ինչը լու չէ արտայայտուած, ինչո՞ւ և ինչպէս աւելի աղէկ պիտի ըլլար: Այս աշխատանքի միջոցին ուսուցիչը կը պատրի նստարաններուն մէջ և կը հետեւ

տառասկաններուն. ասոնցմէ կարեսրներուն ուղղագրութիւնը վերջը ինքը կը զրէ գրատախատակին ու կը պատուիրէ, որ ամեն աշակերտ ստուգէ իր գրածը և սրբագրէ՝ իթէ սիսալ է:

դ. Յօդուածներու առանձին շարք մը կը կազմեն «Պատմէ՛ ու զրէ՛» վերնագիր ունեցողները: Ասոնք շարադրական աւելի ազատ նիւթեր են, ազատ երկու ուղղութեամբ: Նախ՝ տուած չէ հարցերու որոշ յաջորդականութիւն մը, և երկրորդ՝ այդ հարցերուն պատասխանները ըլլարու են տարրեր-տարրեր՝ նայելով ամեն մէկ աշակերտի սահմանական պայմաններուն, մասնաւոր կեանքին, կամ անհատական երեւակայութեամբ: Նախապէս դաստրանին մէջ ուսուցիչը խօսեցներով ու օրինակներով խիստ որոշ ու յատակ կը գարձնէ, ինչ որ աշակերտն կը պահանջուի այլ և կու տայ բոլոր իր համարած զիւրութիւնները: Տղաքը կը գրեն տունը և կը գրեն իրենց իրական տպան ու զգացածը և ոչ շնչու ու պարմանական բաներ: Յաջորդ դասին ուսուցիչը անտրակները կը յողվէ, կը տանի տուն ու աշքէ կ'անցնէ բոլորը, առանց ոչինչ սրբագրելու: այլ առանձին թղթի կատրի մը վրայ կը նշանակէ թէ՛ յարադրական, թէ՛ յեզուական և թէ՛ ուղղագրական տեսակէտէն բացատրութիւն կամ սրբագրութիւն պահանջու կէտերրոդ, որոնց մասին յաջորդ գատին և կը խօսի ու ցոյց կու տայ գրատախատկին վրայ ուղղիղ՝ պահանջելով ամենքին, որ ստուգին իրենք իրենց գրածը ու շտիւն: Ետքը լաւագոյն գրաւածներին քանի մը հատը կարդացնել կու տայ, ամեն անգամ հնիմարկելով իր բնկերներու գրատախատանին, թէ՛ գրաւածքին մէջ ո՞ր կատրն էր աւելի յաջող, ինչ բանն էր ստելի աղուոր, ինչո՞ւ: Անյաջող ու թերի գրուածները աշակերտաներու առջև երբէք պէտք չէ կարգացուին, սիսալ ու աղեղ բաներ լսելին օգուա չը կայ ոչ-պիի:

ե. Յօդուածներու հնագերորդ խումբը կը կազմեն այն վարժութիւնները, հարցարաններն ու փոփոխուած արտագրութիւնները, որոնց գլխաւոր նպատակը լիզուի գիտական կողմն է, այսինքն նախագտառութեան ու բառերու կազմի ըմբռառումը, անոնց փոխադարձ յարաբերութիւնն և կրած փոփոխութիւններուն ուսուցնեամբիրութիւնը: Քերա՛խանական այս օրէնքներու գործնական ուսուցումը աւելի հաստատ, աւելի կանոնաւոր ու նուրբ կը գարձնէ նաև մեր մաքերուն արտայայտութիւնը, ինչպէս և որոշ չափով մը կը նպաստէ ուղղագրութեան: Մենք ընտրեր ենք քերականական օրէնքներուն սովորական դէղին մէջէն միայն ամենին հիմնականը, ամենին միաք բացողը և ամենին ցայտունը այդ ասարիքին համար:

թէ մեր ընտրութիւնն ու բանած ուղղութիւնը աւելի պարզ դարձնելու և թէ ուսուցչի որոնումները դիւրացնելու համար՝ յաջորդ էջին վրայ կը դնենք ցանկ մը, ուր սիսթեմատիկ կերպով խմբած ենք այս զրայիկի քերականական նիւթը:

## ՄԻՍԹԵՄԱՏԻԿ ՑԱՆԿԸ

Քերականական այն հիմնական բնբոնւմներուն ու վարժութիւններուն,  
որոնք ցրուած ու հիւսուած են վարի յօդուածներուն մէջ

### I. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԼՆ ԿԱԶՄԸ

#### Ա. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԼՆ

- Խոսք ու գիր 1. 2. 3  
Միտք 4. 5. 9. 11. 12  
Նախադասութիւն 16. 17. 19. 22. 47  
57. 60. 75. 111. 112. 162

#### Բ. ԵՎՀԹԱԿԱՑ

- Ո՞վ է ընողը 47. 49. 50. 54. 55  
Գործողութիւնը կատարողը 60. 61. 75  
Ենթակայ 76. 92. 111. 112  
Ենթական չըսուած 162.

#### Գ. ՍՃՈՐՈԴՆԵԼԻ

- Ով ի՞նչ կ'ընէ 57. 59  
Գործողութիւն 60. 61. 75  
Ստորոգելի 76. 112. 129. 130

#### Դ. ԼՐԱՅՆՈՒՅՆ

- Միտքը լրացնող բառեր 143. 145. 146  
147. 150  
Ով մասնիկով 154. 155. 156. 167  
Էն մասնիկով 158. 159. 167  
Ին մասնիկով 161. 163. 167  
Առանց այդ մասնիկներու 149. 163. 167  
Լրացուցիչներու չորս ձեւը 163. 165

### II. ԲԱԽԵԲՈՒԻ ԿԱԶՄԸ

#### Ա. ԱՐՄԱՏ

- Իրարմէ շնուռած բառեր 21. 25  
Բառերու արմատը 30. 31. 37. 40. 41  
44. 45. 64. 65  
Ի՞նչ է արմատը 38. 53  
Բ. ՄԱՍՆԵՐԻ

- Ենի մասնիկը 26  
Երէն մասնիկը 35. 36

#### Ուրիշ մասնիկներ 37. 40

#### Ի՞նչ է մասնիկը 38. 53

#### Գ. ՌԱՅՐՈՒ ՌԱՅՈ

- Երկու արմատով բառեր 95. 96  
Ի՞նչ է բարդ բառը 97. 116  
Բարդ բառի մէջ ա կազը 116

#### Դ. ԱՐՄԱՏԻ ՀԵՇԱԿԱՆ

- Ու հնիւնի կորուսար 40. 41  
Ի հնիւնի կորուսար 44. 45  
Է կը դասնոյ ի 64. 65  
Ոյ կը դասնոյ ու 64. 65

### III. ԲԱԽԵԲՈՒԻ

#### ԽՈՆՍՐՀՈՒՄՆ ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄԸ

#### Ա. ԹՐԻ

- Մէկ հատ ու աւելի 67. 68. 69. 79  
Եր ու ներ մասնիկները 72. 80. 81. 82  
Եղակի ու յոզնակի 83. 90. 122  
Ենթակային ու ստորոգելիին թիւը 92  
118. 120

#### Բ. ԳԻՒՄՐ

- Ես, գուն, ան. 99. 100. 101. 102  
103. 107. 108  
Մենք, դուք, անձնք. 117. 119. 121  
Արտայայտութեան երեք դէմքը 104.  
109. 123. 125. 152

#### Եք վերջաւորութիւնը 124. 125

#### Գ. ԵՎՀԱԿԱՑ

- Շարունակուող գործող. 127. 129. 131  
Վերջացած գործող. 128. 130. 132  
Աւարտ ու անաւարտ եղանակ 133.  
134. 135. 137  
Կը և կ' անաւարտ եղա. մէջ 140. 141

ԳԻՆԸ 2 ՂՐՈՒՇ

ԼՈՒՍԱԲԵՐԻ ՀԱՐՔԵՆ

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵՐ

ԼՈՒՍԱԲԵՐ, ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

64 երես, 80 պատկեր եւ բազմարիւ ձեռագիրներ, Դիմ 100 փարա

ԼՈՒՍԱԲԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Ա. ՏԱՐԻ

80 երես պատկերազարդ . . . . . 4 դրույ

ԼՈՒՍԱԲԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Բ. ՏԱՐԻ

112 երես պատկերազարդ . . . . . 5 դրույ

ԼՈՒՍԱԲԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Գ. ՏԱՐԻ

թես պատկերազարդ . . . . . 6 դրույ

ԼՈՒՍԱԲԵՐ ԳՐԱԼԻԱՐ Վ.Ա.ԲԺՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. ՏԱՐԻ

48 երես շաբադրական պատկերներով . . . . . 2 դրույ

ԼՈՒՍԱԲԵՐ ԳՐԱԼԻԱՐ Վ.Ա.ԲԺՈՒԹԻՒՆՆԵՐ, Բ. ՏԱՐԻ

48 երես շաբադրական պատկերներով . . . . . 2 դրույ

ԼՈՒՍԱԲԵՐԻ 0191630332

Գրել-կարգալ, սորվեցնելու եղանակը . . . . . 10 դրույ

Տեսակ

2013  
3677



